

G.V. NIKOGHOSYAN

## THE ORIGIN OF PERSONAL PRONOUNS

The research topic of the article is the origin of personal pronouns which is one of the most obscure mysteries of comparative-historical linguistics. As a base for the investigation is taken the fact that in most languages of the world pronouns originate from nouns. In some languages pronouns have preserved their original meaning, in some cases, the noun is used as a pronoun as well. The material for the research has been taken from different language families, especially from Indo-European and Fenno-Ugric languages. It is supposed that personal pronouns of the types *man* and *ego* in the Indo-European languages come from nouns with the original meanings *man* and *soul*. Later the semantic field was enlarged, and the same root obtained some other meanings, i.e. *male, warrior, knight, lord, body, person, husband, king, commander, hero, creature, army, crowd, spirit, ghost, wind, shadow, vapour, air, etc.*

**Keywords:** comparative-historical linguistics, personal pronouns, Indo-European languages, Fenno-Ugric languages, original meaning, origin of pronouns.

ՀՏԴ 9(479.25): 82

### Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

#### ԵՂԵՌՆԸ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐՀՈՒՇԸ ԼԵՎՈՆ-ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ «ՁԵՁ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՏԻԿԻՆՆԵՐ՝ ԵՎ ՊԱՐՈՆՆԵՐ՝» ՎԵՊՈՒՄ

Անդրարդարձ է կատարվում օտարագիր հայ գրողներից մեկի՝ ցեղասպանության թեման շոշափող ստեղծագործությանը:

Աշխարհում ստեղծվել և ստեղծվում է Հայոց Մեծ եղեռնին նվիրված ու եղեռնն արտացոլող մեծածավալ գիտական ու գեղարվեստական գրականություն: Եղեռնն իր կնիքն է դրել ոչ միայն եղեռնից մազապուրծ փրկվածների, այլ նաև հետագա սերունդների ճակատագրերի վրա: Լևոն-Չավեն Սյուրմեյանն օտարագիր հայ գրականության մեջ առաջիններից էր, որ անդրադարձավ եղեռնի թեմային:

**Ասանցքային բառեր.** եղեռն, իրողություն, զգացողություն, քննադատություն, վերհուշ, ինքնություն:

Լևոն-Չավեն Սյուրմեյանը, գրելով անգլերեն, իր ժողովրդի ապրած ողբերգությունը հանեց համաշխարհային ասպարեզ, ցույց տվեց դարի մեծագույն հանցագործությունը և ապացուցեց հայերի ապրելու իրավունքը: «Ուրիշ վերապրողներ թող գրեն հայերերեն, -վկայում է գրողը,- ես պետք է իմ պատմությունն անգլերեն պատմեի: Ես կրնամ որպես ամերիկյան գրող ավելի մեծ չափով ծառայել իմ ժողովրդիս ու անգլերեն գրելով՝ չեմ դադարել հայ գրող մը ըլլալ» [1]:

1945թ. Նյու Յորքում լույս է տեսնում Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» վեպը, որի բոլոր գլուխները առանձին պատմվածքների ձևով լույս էին տեսել ամերիկյան տարբեր հանդեսներում ("Prarie Schooner", "Mirror Spectator", "Hairenik Weekly"): Վեպը մեծ ճանաչում բերեց գրողին, այն թարգմանվեց աշխարհի շատ լեզուներով, հայերեն տպագրվեց միայն 35 տարի անց՝ 1980թ.-ին: Սյուրմեյանն իր առջև նպատակ էր դրել գրել մի գիրք, որը «Եթե ոչ մի հետք չմնար Արևմտյան Հայաստանից, հնարավորություն պիտի տար պատմաբաններին ու ազգագրագետներին՝ վերակառուցելու այդ անհետացած կյանքը: Ես գրում էի ազգերի թանգարանի համար, վկայություն էի տալիս համաշխարհային մի առյուծանում, բոլոր բարի կամքի տեր մարդկանց առաջ» [1]:

Վեպը հազարավոր անմեղ նահատակների և եղեռնը վերապրածների մասին է, որոնք, ինչպես վկայում է գրողը, անկարող էին աշխարհին պատմել իրենց ապրածն ու զգացածը: «Հիշատակը՝ հիշողությունը, սրբազան պարտքի զգացողությանը զուգակցված,- գրում է Վարդան Փարթամյանը,- դառնում է բազմաբնույթ ստեղծագործական նյութ, որը մերթ արտահայտվում է ականատես-վկայի հուշերի ձևով, մերթ մղձավանջին հաղորդակցվելու եղանակով, բայց երկու դեպքում էլ՝ խորապես ապրված ու կենդանի ընկալմամբ» [2]: Վեպը շարադրված է պարզ ու բնական, առանց շլացուցիչ տարրերի: Ժանրի մեջ չկա հայտնության միտում. Սյուրմեյանը իր պատանեկան հայացքով ներկայացնում է ոչ միայն իր սերնդի, այլև՝ ժողովրդի մեծ հատվածի ողբերգությունը: «Անձնապես չեմ սիրում մանկության կամ պատանեկության շրջանի ինքնակենսագրություններ՝ գրված հասուն մարդու տեսանկյունից, երբ հեղինակը շարունակ միջամտում է իր պատմությանը՝ լուսաբանելու այս կամ այն կետը, բացատրելու այս կամ այն նկարագիրը կամ դեպքը: Ուրեմն ահա՝ ինչ որ պատահեց ինձ և հենց այնպես, ինչպես պատահեց: Այստեղ ոչինչ չի փոխված, ոչինչ չի ավելացված: Ես արձանագրեցի լոկ այն, ինչ որ կրել էի ինքս և աչքովս էի տեսել: Եվ ուզում էի ամեն ինչ պատմել այս իրադարձություններից մազապուրծ մի տղայի տեսանկյունից, բնականաբար, սահմանափակ գիտելիքներով ու նեղ մտահորիզոնով տղայի, առանց ավելացնելու որևէ բան, որ իմացել էի հետագայում: Դա կխեղաթյուրեր պատմությունը» [1]:

«Լևոն-Չավեն Սյուրմեյանը,- գրում Վ. Սարոյանը,- մեկն է այն բազում հայ երեխաներից, որոնք խաղի բերին թշնամուն ու չմեռան: Այդ երեխաների պատմությունը հիմա հայտնի է բոլորին: Ֆրանց Վերֆելը մասամբ պատմում է այն «Մուսալեռան քառասուն օրը» վեպում և մի քիչ էլ էյգին Գրոսբլոզը «Արարատում»: Իսկ այստեղ առաջին անգամ արվում է ամբողջ պատմությունը հենց այդ երեխաներից մեկի կողմից: Ոչնչացվեց նրանց աշխարհը, բայց ո՛չ կյանքը: Լևոն-Չավեն Սյուրմեյանը Երկրից եկավ Ամերիկա և սկսեց նորոգել իր կյանքի ավերված առասպելը» [1]:

Սյուրմեյանի ստեղծագործության մեջ կողք կողքի են իր պայծառ Տրապիզոնը և տեղահանության ու ետեղեռնական շրջանի մռայլ իրականությունը, պատանու կենսասիրությունն ու շքեղ տեսիլքները և ճնշող անհուսությունն ու հիսաթափությունը: Ժանրային տեսանկյունից յուրահատկությունն այն է, որ պատումի մեջ գրողը հավատարիմ է լուսանկարչական ճշտությանը, որն ակնհայտորեն գերադասում է հյուսվածքից: Գրեթե ժամանակագրական տարեգրության սկզբունքով են կերտված Տրապիզոնը, գյուղը, Գյումուշխասեն, Ջևիզլիքը, Սև ծովը, Պոլիսը, Կոբուլետին, Բաթումը, Ազովի ծովը, Եյսկը, Ռոստովը, Նովորոսիյսկ, Արմաշը, Արարատը, Երևանը, Նոր Բայազետը, Ղարաքիլիսան, որբանոցային անմոռաց օրերը, մայրը, հայրը, քույրերը, եղբայրը, տատը, քեռիները. մորաքրոջ ընտանիքը, հորաքույրը, հույն և թուրք հարևանները, հույն բարեկամները, Միքայելը, Սիմոնը, Նուրիխանը, Աշոտը, վարժարանի վարդապետը և վիպական մյուս կերպարները: Հիշողության միջից հանում են կենդանի գծված դրվագային հերոսներ կամ մանրամասներ, որոնք պատանի Սյուրմեյանի ճակատագրի հանդեպ ընթերցողին համակում են սիրով ու տագնապով: Վեպում գերիշխող են հուշագրական- մեմուարային տարրերը: Ու. Ֆուլքերի հետևողությամբ Սյուրմեյանը հաճախ է դիմում հերոսի ներքին մենախոսություններին՝ փորձելով պարզաբանել անցյալի և ներկայի իր համար դեռևս չբացահայտված կողմերը: Անցյալի մասին խոհը անհանգիստ ընթացք ունի Սյուրմեյանի համար, քանի որ ներկայի մեջ հասրատնում է անցյալի զորությունը: Դա այն հին տպավորությունը չէ, մեզ ներքին հավասարակշռության հանգեցնող ծանոթ դատողությունները, որոնցով կողմնորոշվում ենք ներկայիս մեջ: Կենսագրության ապրած յուրաքանչյուր դրվագը բարի անցյալ է: Սփյուռքահայ յուրաքանչյուր գրողի համար ինչպես նկատել է Ալ.Թոփչյանը . «Նոր և օտար միջավայրի պարտադրող պառակտման դեմ անցյալը հոգևոր հենարան էր, ազգային ինքնությունը պահպանելու միակ միջոցը» [3]:

Սյուրմեյանը անցյալի մասին իր պատումով ստիպում է ընթերցողին խորհել իր ներկայի մասին, ճշտել, թե այն ինչ տարրերով է լեցուն: «Հայի հիշողությունը գանձատուն է ու պահապանը հայկական երազի՝ անդուլ, անվերջանալի կռիվ հանուն ազատության և ազատություն, պետք է ասեմ ես ոչ միայն մեզ, այլև բոլոր մարդկանց համար...Հայերը հիշում են, ուստի աշխարհը և հատկապես փոքր ու տկար ազգերը հավետ ապահով կլինեն ցեղասպանությունից: Ինչ որ պատահեց մեզ, ուրիշներին չի պատահի» [1]:

Հրաշալի է նկատված: Այստեղ ժամանակի գործոնը սուբյեկտի գիտակցության մեջ վճռորոշ դեր ունի, խորացնում է «ապրելու» իմաստավորումը, այսինքն՝ այն, որ պիտի տոկա ժամանակի մեջ, ժամանակի դեմ, ստեղծվում է ներկայի, անցյալի աննկատ միահյուսումից: «Ձեզ եմ դիմում տիկիներ և պա-

րոններ» վեպը սոսկական հուշերի հերթագայություն չէ, այն լի է կենդանի հույզերով, տառապանքներով, մարդկային երջանկությանը կարոտ ճակատագրերով: Գրողին զբաղեցնում է «անապատային սերնդի» բարոյական համակողմանի նկարագրությունը: Սյուրմեյանը վարպետորեն կարողանում է տալ այդ սերնդի ամբողջական բարոյական-հոգեբանական նկարագիրը: Առանց հուզումի անհնարին է կարդալ հույն աղջկա՝ Անթուլայի հանդեպ Ջավենի պատենեկան մաքուր ու ազնիվ սերը, որը դառնում է լուսավոր մի հուշ: Ստեղծագործության շատ հատվածներ, հատկապես Տրապիզոնի, Պոլսի, Բայազետի մթնոլորտները, հերոսների պանդուխտ տրամադրություններն ու կարոտը, արկածները հիշեցնում են Վազգեն Շուշանյանի «Սիրո և արկածի տղաքը», «Մթին պատանություն» վեպերը: Վիպական կենտրոնական հերոսներին՝ Ջավենին, Արշամին և Բաբկենին մերձեցնում են կյանքի բարդությունները հաղթահարելու զարմանալի ջիղը, կենսասիրությունը, ինքնուրույնությունը: Վեպում կերպարները միահյուսված են գլխավոր հերոսի՝ Ջավենի գործողությունների և հիշողությունների առանցքի վրա և ի հայտ են գալիս ապրումների, հետահայաց զգացումների, հիշատակների ոգեկրճման շնորհիվ: Ու Ֆուլքների նմանողությամբ Սյուրմեյանը ձգտում է իր հերոսի ներքին աշխարհը ներկայացնել նրա իսկ հիշողությունների պրիզմայով, և դա, ինչ խոսք, հաջողվել է գրողին: Ֆուլքների հերոսի՝ Քվենտին Կոմպսոնի («Աղմուկ և ցասում») նման Սյուրմեյանի հերոսը, շնորհիվ իր ներքին մենախոսության, կարողանում է անմնացորդ տրվել հետահայաց հիշողություններին և ճշգրտորեն պատկերել իր ընտանիքի անդամներին, հարազատներին: Գրողը բացում է հիշողության անկյունների փակ դռները, և վերստին իրականություն են դառնում անցյալ ժամերը: Մի խոսքը, մի հնչյունը, ակնարկը, առօրյայի անտեսված մեկ մանրամասը նոր ուժով, նոր իմաստաբանգով են ներխուժում հերոսի կյանք, դառնում տիրապետող հատկանիշներ: Վեպի սյուժետային զարգացումը անցյալի և ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի ներքին տեսողությամբ: Այստեղ գործողությունները զարգանում են հերոսի վերհուշի շնորհիվ: Վեպի հերոսը աշխարհի հետ ունեցած իր բոլոր կապերի գեղարվեստական հոգեբանական քննության մեջ բացահայտում է իր և իր բախտակից պատանիների ներաշխարհը: Հերոսին մերթ տեսնում ենք իր հայրենի օրրանում, ծնողների ու հարազատների կողքին, մերթ՝ գաղթի ճամփաներում, մերթ՝ իր նման անտուն ու անտեր որբերի ուսումնարանում: Հաճախ հերոսը անէանում է իրական աշխարհից, տրվում անցյալի քաղցր հիշողություններին, անցած-գնացած երանավետ օրերին: «Ինչքան բախտավոր էի,-հավաստում է գրողը,- ծայրաստիճան երջանիկ մի շատ կարճ ժամանակ առաջ և առանց գիտակցելու այդ» [1]:

Անցյալը նրա համար կենարար ուժ է: Նա կարոտով է հիշում մանկությունը, հայրենի տունը, ծնողներին, քույրերին ու եղբորը: Վեպում նման հուշ-պատկեր-

ների կարելի է հաճախակի հանդիպել: Գրողը նրանց միտումնավոր հաղորդում է շարունակական հնչողություն: Դժվար չէ նկատել, որ գեղարվեստական որոնումները Սյուրմեյանին տանում են նոր հանգրվանի բացահայտման՝ հայրենիքի հոգեբանական ծալքերը մարդու ներաշխարհի միջոցով վերագտնելու փորձին: Աքսորի դաժան ճանապարհները, մարդկային անասելի տառապանքները Ջավենին և նրա բախտակից ընկերներին չեն կոտրել, ավելին, նրանց ապրելու ուժ ու կորով են հաղորդել: «Մեր այս պատմական սերունդը,-ասում է հերոսներից Աշոտը,- հաղթանակի ու երգի բնագրին ունի: Մնացողներս շատ ենք, նրանք սպանեցին մեզնից շատերին, բայց վերապրողներս ուժեղ ենք...Մեր որբ սերունդը վշտի հանճարը, վշտի աննվաճ ուժն ունի» [2]:

Հերոսը կարոտով է հիշում դպրոցի տեսուչին, որին վարդապետ էին կոչում, որը անապաստան երեխաներին, որոնցից շատերը հայտնվելու էին օտար երկրի անհյուրընկալ փողոցներում, և ով գիտե՝ ինչ ճակատագիր էին ունենալու, հավատքի, հայրենասիրական դասեր էր տալիս, սովորեցնում ապրել, պայքարել, հայի ուսումնատենչ հոգին պահպանել: «Որոյակք իմ սիրելի, թուրքերը տապալեցին մեր ազգի հինավուրց ծառը: Դուք, անկասկած, պետք է վրեժ լուծեք: Ձեր մեծագույն հայրենասիրական պարտականությունն է այդ, ձեր կյանքի սրբազան գործը: Բայց դուք պետք է վրեժ լուծեք որպես քրիստոնյաներ և Մխիթարյան սասներ՝ բարձունքներ նվաճելով ու պատիվ բերելով ձեր դպրոցին ու ազգին և սիրելի լինելով աստծուն, որպեսզի ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ձեզ ցույց տա և ասի. «Սրանք նոր ճյուղերն են այն հուժկու ծառի, որ զգեստնեցին թուրքերը, բայց արմատները ոչնչացնել չկարողացան» [1]:

Սյուրմեյանը կարոտով է հիշում նաև հույն բժիշկ ծերունի Մեթաքսասին, որի շնորհիվ փրկվեցին են իր եղբայրն ու քույրերը: Ականջներում դեռ հնչում է սրբազան պատգամ դարձած նրա խորհուրդը, «Մի մոռացեք ո՛չ ձեր հայրենիքը, ո՛չ ձեր ազգը» [2]:

Ջավենը հաճախ է մտաբերում արքայի դաժան ճամփաները, որբանոցային օրերը իրենց դժվարություններով ու դառնություններով, որոնք դարձել են հիշողություններ՝ քաղցր ու տխուր: Նա իր նման անտուն ու անտեր որբերի հետ վայելում է ազատությունը, որն իրենց համար վեր էր ամեն ինչից, որն իրենց կյանքի առաջին ուսուցիչն էր և իրենց սովորեցնում էր տոկալ, սխալների վրա սովորել, ապրել: Սյուրմեյանի հերոսները չեն հուսահատվում, չեն հանձնվում թշվառության կամ խեղճության հոսանքին, ընդդիմանում են կյանքի բոլոր դժվարություններին: Հենց այս ճանապարհին է գտնվում Սյուրմեյանի հերոսների համար գոյության խորհուրդը: «Ամեն մի թոպեն թանկ էր,-ասում է հերոսը,-ինձ փրկելու համար պետք է մի բան անեի, նրանք կսպանեին ինձ: Ես վճռել էի ապրել» [1]:

Հրաշքով փրկվելով եղեռնի ճիրաններից՝ թվում է՝ նրանց կյանքի կոփվր պետք է վերջանա, «անապատային այս սերունդը, արհավիրքը կրած տղեկը» պետք է ազատ շունչ քաշեին: Հայտնվելով անսահման մեծ աշխարհում՝ նրանք շարունակում են իրենց կյանքի կոփվր, որը չի վերջանում, որն այս անգամ ոչ այնքան ապրելու, գոյատևելու կոփվ է, որքան ազգային ինքնությունը պահպանելու կոփվ: Սյուրմեյանի հերոսները դա քաջ գիտակցում են, մաքառում կյանքի բոլոր դժվարությունների դեմ՝ հավատարիմ մնալով պատանի տարիքում իրենց տված խոստմանը՝ երբեք չհանձնվել, չնահանջել, չձուլվել, մնալ հայ. «Սփյուռքում շատ հայեր հերոսի կյանք են վարում: Մենք բարդ կերտվածքի հայեր ենք,-խրոխտ ասում է գրող հերոսը՝ տրապիզոնցի դեղագործի տղան,- մարտ ենք մղում հայ մնալու գոնե ոգով: Տիկնայք և պարոնայք, ես ուզում եմ ասել աշխարհին՝ ձեզ համար մի լուր ունեմ՝ անհետացող ցեղ չենք մենք: Մենք պիտի գոյատևենք: Հավերժական է Հայաստանը:» [2]:

Սյուրմեյանն իր վեպով իր ժողովրդի ապրած ողբերգությունը հանեց համաշխարհային ասպարեզ, ցույց տվեց հայ մարդու աննկուն, չպարտվող ազգային ոգին: «Ես պետք է գրեի այս գիրքը, այլապես երբեք չէր խաղաղվի հոգիս» [2],- ասում է գրողը:

Եղեռնը բազմակողմանի դրսևորում է ստանում հայ գրողների ստեղծագործություններում: Եղեռնի թեման չի սպառվում, հայր երբեք չի հաշտվում պատմական անարդարության հետ, այն միշտ թարմ է մնում նրա հիշողության մեջ, չի հաշտվի այնքան ժամանակ, քանի որջ աշխարհի արդարամիտ մարդկությունը այն չի դատապարտել: Որքան էլ թուրքական կառավարությունը և որոշ երկրների ծախու գրչակները նենգափոխեն ցեղասպանության փաստը, այն հայերիս համար ապրած իրողություն է, արյամբ փոխանցվող ցավ, ավելին՝ «Եղեռնի ցավը, վրեժը, միավորում է հայ ժողովրդին,-իրավացիորեն նկատում է գրականագետ Դավիթ Գասպարյանը,- օտարությունից գալիս են դեպի հայություն: Ահավոր մեծ վրեժ ունենք լուծելու»: Հայ գրողները՝ օտարագիր թե հայագիր, հարազատ են մնում իրենց ազգային պատմությանն ու կենսական խնդիրներին, ձգտում որջ աշխարհի մարդկությանը ցույց տալ աշխարհում նմանը չունեցող, բանական մարդու ուղեղում չտեղավորվող ահավոր չարիքը՝ հայոց ցեղասպանությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. **Սյուրմեյան Լ.Ջ.** Ձեզ եմ դիմում, տիկիններ՝ և պարոններ. - Երևան: «Սով. գրող» հրատ., 1980:
2. **Փարթամյան Վ.** Սփյուռքի օտարագիր բանաստեղծություն. -Երևան: «Մուղնի» հրատ., 2005:
3. **Թոփյան Ալ.** Ապագայի ներկայությամբ.- Երևան: «Սով. գրող» հրատ., 1987:

**А.П. КАРАГУЛЯН**

**ГЕНОЦИД И ВОСПОМИНАНИЯ ПРОШЛОГО В РОМАНЕ ЛЕВОНА-ЗАВЕНА СЮРМЕЛЯНА “К ВАМ ОБРАЩАЮСЬ, ДАМЫ И ГОСПОДА”**

Левон-Завен Сюрмелян – один из армянских писателей, кто обратился к теме геноцида. В романе “К вам обращаюсь, дамы и господа” он показал национальный дух своего народа, неподатливую волю сохранения национальной идентичности

**Ключевые слова:** геноцид, реальность, ощущение, критика, воспоминание, идентичность.

**H.P. KARAGULYAN**

**ARMENIAN GENOCIDE AND THE PAST IN THE NOVEL OF L.Z. SURMELIAN “I ADDRESS TO YOU, LADIES AND GENTLEMEN”**

Levon-Zaven Surmelyan is one of the Armenian writers who turned to the topic of genocide. In his novel "I Address You, Ladies and Gentlemen", he showed the national spirit of his people, the unyielding will of preserving the national identity.

**Keywords:** genocide, identity, reality, sensation, criticism, memory.

УДК 82 : 9(479.25)

**Б.Ж. ГАЛСТЯН, А.П. КАРАГУЛЯН**

**ВАСИЛИЙ ГРОССМАН И АРМЕНИЯ. НЕИЗВЕСТНЫЕ ФАКТЫ**

В. Гроссман – талантливый, советский писатель. В годы Великой Отечественной войны он был на передовой, писал статьи на военные темы. Итогом размышлений автора стала книга «Жизнь и судьба», которая по разным причинам не публиковалась. Много изменилось в жизни советского писателя, когда он посетил Армению и ознакомился с историей Армянского народа. Он написал эссе «Добро вам!», где рассказал о судьбе армянского народа и сравнил ее с судьбой еврейского народа, а также перевел роман Грачья Кочара «Нагапет» на русский язык.

**Ключевые слова:** национальность, военная проза, рукопись, Армения, идеология, национальный вопрос, геноцид.

Имя В. Гроссмана, наряду с именем А. Битова, часто упоминается в армянской периодике. А. Битов был русским, любимцем партийной элиты как в Армении, так и в Политбюро. Успехом пользовалась его книга «Уроки Армении». В. Гроссман, будучи евреем по национальности, не был любимчиком, несмотря на огромный талант. Судьба преследовала В. Гроссмана всю жизнь. Так, в 1961 году сотрудники Комитета государственной безопасности